

ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց լեզվի աշխարհաբարյան շրջանում հայ լեզվաբանները¹ նկարագրել են ընդհանուր առմամբ 26 կետադրական նշան: Ընդ որում՝ Ստ.Պալասանյանը՝ 7 նշան (նվազագույն քանակ), Ա.Այտընյանը և Հր.Աճառյանը՝ 18 նշան (առավելագույն քանակ)²: Դրանք են՝ 1) վերջակետ (:), 2) միջակետ (.), 3) ստորակետ (,), 4) բութ ('), 5) ստորակետ-գիծ (-,)³, 6) շեշտ (^), 7) հարցական նշան (?), 8) բացականչական նշան (!), 9) առոգանության բութ ('), 10) սուղ (˘), 11) միության գծիկ (-), 12) ենթամնա (-), 13) ապաթարց ('), 14) պատիվ (—), 15) երկշեշտ (ˆ), 16) մակակետ (ˆ), 17) փշիկ (' կամ '), 18) կետ (.), 19) անջատման գիծ (-), 20) փակագիծ (()), 21) կրկնակի փակագիծ ([]), 22) չակերտներ («»), 23) կախման կետեր (...), 24) բազմակետ⁴ (.... չորս կետ և ավելի), 25) կասկածական նշան (?), 26) ծաղրական նշան (!): Կետադրական նշանները ներկայացրել ենք որոշակի հերթականությամբ. 1-5-րդ նշանները տրոհության նշաններն են, 6-10-ը՝ առոգանության, 11-18-ը՝ այսպես կոչված «ուղղագրության»⁵ կամ շարահյուսական մակարդակում գործածություն չունեցող⁶, 19-26-ը՝ բացահայտության: Արդի հայերենում այս նշաններից գործածական են համարվում 15-ը:

Ինչպես տեսնում ենք, հայերենի կետադրության համակարգը մույնական ու կայուն չի եղել: Դա կախված է նրա կազմավորման պատմական պայմաններից և առանձնահատկություններից, ինչպես նաև նշանները ներմուծողների ըմբռնումներից:

Սույն հոդվածում խոսում ենք կետադրության համակարգի փոփոխությունների պատճառների մասին, քննում ենք նաև այն դեպքերը, երբ այդ փոփոխությունները հանգեցնում են կետադրական նշանների գործառույթների ընդլայնման կամ նեղացման:

1. Կետադրական նշանը դուրս է գալիս գործածությունից՝ տվյալ լեզվական իրողության գրավոր նշույթավորման ոչ անհրաժեշտ լինելու պատճառով: Սրա հետևանքով գործածությունից դուրս են եկել՝

ա) Առողջանության բուրբ, որը ցույց էր տալիս, որ բառն անշեշտ է կամ, միավանկ լինելու դեպքում,
հարևան բառերից ավելի բարձրություն չունի. օրինակ՝ *տա՛րա՛պա՛րտ, ո՛վ ո՛ր* (Այտ., 361):

բ) Սուղը, որը ցույց էր տալիս, թե վանկը (զադտնավանկը) սովորականից ավելի կարճ տևողություն ունի. օրինակ՝ *ըստանալ, տըկար* (Այտ., 364):

գ) Փշիկը, որը դրվել է «դատեն դին զատելու յամար. Այդ՝ Իսրայել՝ երթայր զհետ օրինացն» (Զլխ., 499):

Այս նշանները հետագա ուսումնասիրողների մոտ այլևս չեն հանդիպում:

դ) Մակակետը, որը կցագիր տեքստերում դրվել է *ի* նախդիրից առաջ՝ հաջորդ բառից տարբերելու համար. օրինակ՝ *վեր՛իվերոյ* (Այտ., 354): Երբեմն դրվել է նաև *զ, յ, ջ* նախդիրներից առաջ՝ նույնպես հնարավոր շփոթը կանխելու համար: Անջատ գրության անցնելուց հետո աստիճանաբար սկսել է դուրս գալ գործածությունից:

Այս նշանների՝ գործածությունից դուրս գալը մյուս նշանների գործառույթներում փոփոխություն չի առաջացրել:

2. Նույն գործառույթը կատարող նշաններից մնում է մեկը: Այսպես՝ համառոտագրության նշաններից դուրս են մղվում պատիվը և երկշեշտը, որի հետևանքով համառոտագրության ցուցիչի դերը մնում է միջակետիմ⁷: Քիչ դեպքերում նույն գործառույթը կատարում է միության գծիկը. օրինակ՝ *պ-ն* (պարոն), *դ-ր* (դոկտոր):

Այս տեղաշարժին է վերաբերում նաև այն, երբ նույն նշանի գրային տարբերակներից մնում է մեկը: Այսպես՝ չակերտներն ունեին տողի վրայի գրություն (սրանք էլ իրենց հերթին՝ կլոր (« ») կամ անկյունավոր («») և մի եզրը տողի վրա, մյուսը՝ տողից վերև և իրար հակառակ գրություն („“). այժմ հանձնարարելի է տողի վրա և անկյունավոր գրությունը («»):

3. Երկու տարբեր կետադրական նշանների՝ նույն դիրքում զուգադիր գործածությունը հանգեցնում է նրան, որ դրանք ձեռք են բերում ինքնուրույն արժեք:

Պետք է նշել, որ հայերենում հնարավոր է տարբեր կետադրական նշանների համատեղ գործածություն: Այսպես՝ նույն դիրքում կարող են հանդիպել միջակետը և չակերտները, միջակետը և անջատման գիծը, միջակետը (համառոտագրության արժեքով) և վերջակետը, միջակետը (նույն արժեքով) և բուլթը, վերջակետը և չակերտները (ընդ որում՝ չակերտները վերջակետից և՛ առաջ, և՛ հետո), միության գծիկը և վերջակետը, փակագծերը և տրոհության բոլոր նշանները, հարցական և բացականչական նշանները և այլն: Սակայն այս բոլոր զուգորդումները տարբեր լեզվական իրողությունների նշանակյալներ են և առանձին նշանի արժեք չունեն:

Այլ է ստորակետ-գծի հարցը: Այս կետադրական նշանի գործածության ժամանակ անջատման գծի բացահայտական արժեքը կամ իսպառ բացակայում է, կամ զգալիորեն մթազնված է: Նախ՝ վերջադաս և միջադաս հեղինակային խոսքը ուղղակի մեջբերվող խոսքից տրոհվում է ստորակետ-գծով: Այսինքն՝ ստորակետի ու գծի կապակցությունը՝ ստորակետ-գիծը, հանդիսանում է երկու կայուն շարահյուսական հասկացությունների՝ «ուղղակի խոսքի» և «հեղինակային խոսքի» տրոհիչ: Իհարկե, միջադաս հեղինակային խոսքը երկրորդ եզրում կարող է տրոհվել նաև միջակետով ու գծով, վերջակետով ու գծով կամ կախման կետերով ու գծով. և եթե այս դեպքում անջատման գծի բացահայտական արժեքը որոշ չափով զգալի է, ապա չակերտներից հետո՝ վերջադաս հեղինակային խոսքը տրոհելիս, անջատման գծի գործածությունը ուղղակի ավելորդ է, որովհետև ուղղակի խոսքը բացահայտող կետադրական նշանը՝ չակերտները, արդեն առկա է: Այս դիրքում, ինչպես ասացինք, ստորակետ-գիծը հանդես է գալիս ինքնուրույն արժեքով՝ որպես հեղինակային խոսքի տրոհիչ: Առաջին եզրում հեղինակային խոսքի տրոհումը կատարվում է ստորակետ-գծով⁸:

Երկրորդ՝ ստորակետ-գծով են իրարից տրոհվում պարբերության անդամները: Այս դեպքում նույնպես բացակայում է ստորակետի տրոհական, իսկ

անջատման գծի բացահայտական արժեքը, և ստորակետ-գիծը հանդես է գալիս որպես ինքնուրույն տրոհության նշան:

Ստորակետ-գծի գործածության ժամանակ առկա է ոչ միայն տրոհության, այլև տրոհվող միավորներն իրար հակադրելու փաստը, որով էլ ստորակետ-գիծը հակադրվում է տրոհության մյուս նշաններին:

4. Ավելանում են կամ պակասում կետադրական նշաններ՝ այլ լեզուների ազդեցության, լեզվական իրողության նորովի ընկալման (վերաիմաստավորման) հետևանքով:

Ըստ Ա.Այտընյանի՝ օտար (եվրոպական) լեզուների ազդեցությամբ են սկսել գործածվել անջատման գիծը, միության գծիկը, կախման կետերը, կրկնակի փակագիծը, ինչպես նաև ապաթարցը, փակագծերն ու չափերոները⁹:

Կրկնակի փակագծերը, որոնք Ա.Այտընյանը համարել է առանձին կետադրական նշան, Հր.Աճառյանը, իսկ հետագայում նաև Ա.Ղարիբյանը և Գ.Պարիսը համարել են փակագծերի տարատեսակ: Վերջին հեղինակները ավելացնում են նաև ձևավոր փակագծերը ({}):

Բազմակետը՝ որպես կախման կետերից տարբեր կետադրական նշան, համակարգ է մտցրել Գ.Սևակը: Սակայն այդ նշանների տարբեր լինելու, տարբերակման անհրաժեշտության տեսական հիմնավորումները տրվել են ավելի ուշ՝ Ա.Աբրահամյանի կողմից:

Բազմակետի ներմուծումը կետադրական համակարգ հանգեցրեց նրան, որ նեղացավ կախման կետերի գործառնությունը:

Մ.Ղարբինյանի կողմից առաջարկվել է նույնացնել նաև ենթամնան և միության գծիկը («երկուսն էլ ցույց են տալիս բառի հատվածների կապը, միասնությունը.... (Ղրբ., 18))»: Այս ձևակերպումից պարզ չէ, թե «բառի հատվածներ» ասելով՝ հեղինակն ինչը նկատի ունի: Մինչդեռ ենթամնան վանկերի, երբեմն ձևային միացման նշան է, որը հանդես է գալիս միայն տողադարձի ժամանակ: Իսկ միության գծիկը բառային սերտ միասնություն ցույց տալու արժեք ունի: Երկրորդ՝ այս նշանները ունեն նաև գործածության դիրքային սահմանափակություն (տարբերություններ). ենթամնան հանդես է գալիս բացառապես տողի վերջում (չհաշված, իհարկե, քերականական վարժություններում բերվող տողադարձի օրինակները), իսկ միության գծիկը՝ տողի մեջ:

Տողի վերջում միության գծիկի գործածությունն նույնպես հնարավոր է, ուր նրանց տարբերությունը չեզոքացնում է, բայց դա հիմք չի տալիս այդ նշանները նույնացնելու համար: Երրորդ՝ այս նշանների տարբերությունը երևում է միության գծիկով գրվող բարդությունների տողադարձի ժամանակ (հմմտ. ա-րագ-արագ, ծա-նըր-ծանր, լեփ-լե-ցուն):

Ս.Դարբինյանը կետադրական նշանների թվին ավելացնում է կետը, որը «....թե իր բնույթով և թե նախադասության մեջ զբաղեցրած տեղով (դրվում է տառերի կամ թվահամարների հետ և ոչ՝ բառերի միջև) բոլորովին մնան չէ միջակետին» (Դրբ., 19): Բայց այս նույն տրամաբանությամբ հեղինակը որպես առանձին նշան պետք է նշեր թերևս միակի փակագծեր (հմմտ. 1), ա)) և կամ էլ «զբաղեցրած տեղը» հաշվի առնելով՝ չնույնացներ միության գծիկը և ենթամնան:

Չր.Աճառյանը կետադրական համակարգ է ներմուծում կասկածական և զարմացական նշանները՝ առաջինի համար հատկանշական համարելով երկբայություն, կասկած կամ անստուգություն ցույց տալը, երկրորդի համար՝ ծաղր կամ հեզմանք ցույց տալը: Նկատելի է, որ փոխառյալ մյուս նշաններից սրանք տարբերվում են նրանով, որ գործածվում են ոչ այն նշանակությամբ, որ ունեն փոխատու լեզվում:

Չր.Աճառյանն ունի այս նշանների գործածության բազմաթիվ դեպքեր: Հետագա ուսումնասիրողները այս նշանները դուրս են թողնում կետադրության համակարգից: Սակայն այս նշանների գործածության հանդիպում ենք թե՛ մամուլում, թե՛ բանասիրական և գեղարվեստական գրականության մեջ:

Բանասիրական գրականության մեջ կասկածական նշանը գործածվում է, երբ տվյալ լեզվական իրողությունը կամ նրա առկայությունը կասկած է հարուցում (հմմտ., օրինակ, Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, կասկածական նշանի գործածությունները աղյուսակներում): Հեզմանք արտահայտելու համար գործածական են չակերտները:

Գեղարվեստական գրականության մեջ այս նշանները քիչ գործածական են. բերենք մեկական օրինակ. *Նրանք, որոնք տեղյակ էին նրա՝ Նապոլեոնի մասին ունեցած պաշտամունքին, լսելով նրա դասախոսությունները, եկան այն համոզմունքին, որ պրոֆ. Սելիք-Անդրեասյանի մեջ կատարվել է հիմնական*

բեկում, որ անդառնալիորեն հաստատ ոտներով կանգնած է մարքսիստական պատմական մատերիալիզմի հողի վրա!!! (ԹՈՔ., 2, 100):

Հետևյալ օրինակում կասկածական նշանի գործածությունը անհատական բնույթ ունի, չի բխում գործածության որևէ կանոնից.

- *Դուք երբևիցե սիրե՞լ եք,- հանկարծ հարցրեց Ելենա Բեզլարովնան՝ ազատորեն ծեռքը դնելով Վահրամի ուսին:*

-?

-*Կամ գիտե՞ք ինչ է սիրելը (ԹՈՔ., 2, 159):*

Ինչպես նշեցինք, հետագա ուսումնասիրողները այս նշանները դուրս են թողել. կետադրական համակարգից՝ երևի նկատի ունենալով նրանց գործածության սահմանափակությունն ու յուրահատկությունը¹⁰:

Բուն իմաստային փոփոխությունները, որոնք կախված չեն կետադրական տեղաշարժերից, կատարվում են կետադրության կանոնների ձևավորման հետ: Սակայն կետադրական նշանների և կետադրական կանոնների փոփոխությունները չեն կատարվում ինքնանպատակ կամ պարտադրաբար, այլ ձևավորվում են որպես ամփոփիչ հետևանք՝ ուսումնասիրելով մամուլում, առանձին հեղինակների մոտ տեղ գտած միտումները:

ՃԱՆՈՅՍԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այստեղ նկատի ենք առել այն հեղինակների աշխատությունները, որոնք քննության են ենթարկել կետադրության համակարգն ամբողջությամբ (այդ թվում՝ նույն հեղինակի՝ հարցի վերաբերյալ ունեցած տարբեր կամ վերահրատարակված աշխատությունները): Դրանք են՝ Ա.Այսլընյան, քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, Վրթ.Չալըխյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885: Ստ.Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Տփլիս, 1894: Գր.Վանցյան, Դպրոցական քերականութիւն, Թիֆլիս, 1900: Ձ.Ասատուր, Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, Կ.Պոլիս, 1911: Ս.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ.2, Երևան, 1974: Գ.Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1937: Ա.Դարիբյան, Գ.Պարիս, Հայոց լեզվի ուղղագրական, կետադրական և քերականական ուղեցույց, Երևան, 1953:

Գ.Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1972: Գ.Ջահուկյան, Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, թիվ 7: Ս.Աբրահամյան, Հայոց լեզու (շարահյուսություն), Երևան, 1984: Ս.Աբրահամյան, Հայոց լեզվի կետադրություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, 1992: Ս.Աբրահամյան, Հայոց լեզու (շարահյուսություն), Երևան, 1994: Ս.Աբրահամյան, Հայերենի կետադրություն, Երևան, 1999: Հր.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.6, Երևան, 1974: Գ.Գարեգինյան, ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Երևան, 1991: Մ.Դարբինյան, ժամանակակից հայոց լեզվի կետադրություն, Երևան, 1990:

2. Չնայած կետադրական նշանների նույն քանակին՝ Ա. Այտընյանի և Հր. Աճառյանի նկարագրած կետադրական համակարգերը նույնական չեն: Ա. Այտընյանը որպես առանձին նշաններ է նկարագրել առոգանության բուժը, սուղը, կրկնակի փակագծերը և մակակետը, Հր. Աճառյանի մոտ դրանցից առաջին երկուսը բացակայում են, կրկնակի փակագծերը համարվում են սովորական փակագծերի տարատեսակ, իսկ մակակետը նույնացվում է ապաթարցի հետ: Բացի դրանից՝ Աճառյանը համակարգ է ներմուծել զարմացական (!) և կասկածական նշանները (?), պատիվը և երկշեշտը: Այժմ գործածական մյուս նշանները (բացի բազմակետից) երկու հեղինակների մոտ էլ առկա են:

3. Ստորակետ-գիծը կետադրական նշանների բուն թվարկման մեջ լեզվաբանները չեն նշում: Մենք այն մտցնում ենք որոշ վերապահությամբ՝ հաշվի առնելով, որ Ս. Աբեղյանը ստորակետի ու գծի համատեղ գործածության կանոններ է նշում, իսկ Գ. Ջահուկյանը դրանց կապակցությունը համարում է «գրեթե ինքնուրույն արժեք ունեցող»: Տես Գ.Ջահուկյան, Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, էջ 78:

4. *Բազմակետ* տերմինն առաջին անգամ օգտագործել է Գր.Վանցյանը: Սակայն այն ձևով նման է կախման կետերին: Դրանց գործածության կանոնները Գր.Վանցյանի դասագրքում բացակայում են, բայց պետք է ենթադրել, որ դրանք գործառնությամբ չեն տարբերվում նախորդ լեզվաբանների նշած կախման կետերից:

5. Տերմինը Ձ.Ասատուրիին է, տես նշվ. աշխ., էջ 30:

6. Կետադրական նշանների նման խմբավորում կատարել է Գ.Գարեգինյանը, տես նշվ. աշխ., էջ 397:

7. Մ. Դարբինյանը համառոտագրության նշանը «կետ» անվանումով դիտում է որպես առանձին նշան: Տես Մ.Դարբինյան, 1990, էջ 18:

8. Առաջին եզրում երբեմն հնարավոր է կախման կետերի ու անջատման գծի համատեղ գործածություն, օրինակ՝ - *Հովնաթան... - նորից բացականչեց ապշահար հայրը, - դո՛ւ չիմեցիր* (Թոթ.):

9. Տես Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 351 և 355: Հ. Մխիթարյանը չակերտների ձևը և դրանց հետագա ծևափոխությունը համարում է ինքնուրույն, այլ ոչ թե եվրոպականից փոխառնված: Տես Հ. Մխիթարյան, Հայերենի կետադրության համառոտ պատմություն, Ե, 1972, էջ 110:

10. Բանասիրական գրականության մեջ գործածվում է օժանդակ (պայմանական) նշանների մի համակարգ (սղման նշան (ϕ), անկյունավոր փակագծեր ($< >$) և այլն), որն առանձին նկարագրության և ուսումնասիրության կարիք ունի: Մեր կարծիքով, կասկածական և զարմացական նշանները իրենց գործառնությամբ հարում են օժանդակ արժեք ունեցող այս գրանշաններին: